թիւն ունի, որ «ուսումնասէր Տաճկան Յովհաննէս Ամիրան Բ. Դիւան հրամանով Եւրոպա ճանապարհորդեց» (23 փետր.)։ Մի՞թէ մի մեծ ազգային եղելութիւն է, որ 1829 թ. 12 հրէաներ հայոց դաւանութիւն ընդունեցին Կ. Պօլսում։ Կամ մի՞թէ, իրօք, վանեցի Աստանիկ Տէր-Մարգարեանցը, այդ լալանի բաղդախնդիրը, 1875-ին ընտրուեց անդամ Պարիզի Ակադէմիայի. եթէ միայն այդ սխալ անունով ուզում են ասել «Ֆրանսիական Ակադէմիան», չենք կարծում. իսկ ի՞նչ նշանաւոր բան է Գրինիոնի երկրագ. վարժարանում ոսկէ մրցանակ ստանալը (անօ 19 մայիսի)։ Նկատենք, որ Բեռլինի Վեհաժողովը ուղարկուած երկու հայ պատգամաւորները էին ոչ թէ Խորէն-Նարպէյ և Խրիմեան, այլ Խրիմեան և Խորէն-Նարպէյ (1-ին յունւ.)։ Համաձայն ենք, որ այդտեղ զանազանութիւնը միմիայն ե-ի մէջ է։ Այդ ի՞նչ Մ ա ր ա ղ հնձելաւոր իսպառ կողոպտեց Մշու և ս. Կարապետի վանքը (29 յուն.)։—Լուի Ֆիլիպպ կայսր չէր (4 օգոստոս), այլ թագաւոր և նորա որդին էր ոչ թէ Մոնպանսիէ, այլ դուքս դը Մոնպանսիէ։

Կարելի էր չը մոռանալ Րաֆֆիի մահուան մասին, մանաւանդ որ յիշուած են Ծերենցի, Շանշեանի, Պալասանեանի մահուան օրերը։

Մենք կրկնում ենք, որ հասուածական օրացոյցների առաւելութիւնները նոյն ձևի մէջն են կայանում. այնպէս որ, եթէ չը լինին էլ ուրիշ տեղեկութիւններ, արժէ նրանց ձեռք բերել և պատի վերայ կախել. ամեն սենեակում նոքա կարող են նոյն իսկ պատի զարդ համարուել։ Բայց քանի որ օգտակար է համարուած օրացոյցների այդ ձևը ծառայեցնել նաև գրական, քաղաքական, տնային անտեսութեան և այլ տեղեկութիւններ հաղորդելու համար, մենք արդար ենք համարում պահանջել, որ այդ մասի վերայ կազմողները լուրջ կերպով աշխատեն։ Եւ որպէս զի մեր պահանջը կարելի լինի կատարել, մեր առաջին պարտքն է այդ, մանաւանդ գաւառներում շատերին դեռ ևս անյայտ, օրացոյցի տարածուելուն նպաստենք։ Թիֆլիսի, Բաքուի և այլ տեղերի քաղաքացիներից շատ շատերը ոչինչ կորցրած չեն լինիլ, եթէ «Кавк. Кал.» օրացոյցի տեղ ձեռք բերեն Աղանեանցի հասուածական օրացոյցը։

Ա.

---

ՋՄՇԿԵԱՆ ՄԱԿԱՐ. «ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ» 1890 *թ. Քր., (երրորդ տարի). Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի,* 16-*ածալ,* 128 *երես։ Գինն է* 15 *կ.։*

---

Այդ օրացոյցի յաւելուածը սպառնակում է ցուցակներ օրերի, երբ պսակի խորհուրդը չի կատարւում և օրերի, երբ դպրոցներում արձա-

կուրդ է, ժամանակագրութիւն նշանաւոր անցքերի, ռուսաց կայս. տունը, Կովկասի նահանգների կառավարիչներ, Հայաստանեայց Եկեղեցու վարչութիւն. 100 ռուբլու տոկոսները և Երազահան։

Ա.

---

ԱՂԱՆԵԱՆՑ ԳԻՒՏ քահանայ. «ՕՐԱՑՈՅՑ» 1890 Թ. Քր. և հայկակ. ՏՅՁԲ (4382) և տոմարական Թւակ. ազգիս ՌՅԼԹ։ Թիֆլիս, տպ. Մարտիրոս., հրատարակութիւն «Աղբիւր» պատկեր. ամսագրի։ 1/32 ծալ, 126 երես։ Գինն է 15 կոպ.։

---

Յաւելւածը տալիս է 1) համառօտ ժամանակագրութիւն հայոց պատմութիւնից, 2) կենդրոնական գրավաճառանոցի հայերէն գրքերի ցուցակը։

---

„АРМЯНСКІЙ КАЛЕНДАРЪ“ (сокращенный) на 1890 г. съ предсказаніями. IV-й годъ. Тифлисъ, типогр. Мартиросянца, 1889 г.

---

Այս օրացոյցի, որ հայկական է, ռուսաց լեզուով թարգմանելու միակ հիմքը այն հետաքրքրութիւնն է, որ մի քանի տարիներից ի վեր սկսել է ցոյց տալ ռուսաց տեղական (Թիֆլիսի) հասարակութիւնը դէպի հայկական «էֆեմերդին»։ Եթէ հայկական էֆեմերդին կոչւած էլ լինի բռնել Կնաուէրի, Հելւիգի և մանաւանդ Տօքալդօ'ի տեղը, որոնցից մանաւանդ վերջինս մեծ հռչակ ըստացաւ Արեւմտեան Եւրոպայում,— հայութիւնը չէր ձեռք բերիլ մի նոր պարծանք կուլտուրական աշխարհի առջեւ, իսկ վերջինս մի նոր վաստակ չէր ունենալ այդ բանից։

Այս օրացոյցի հրապուրանքներից երկրորդն է՝ Ճաշի օրացոյց Թիֆլիսի մօքալաքի, այսինքն՝ բուն Թիֆլիսցու։ Այդ մասը կազմւած է փորձւած մարդու ձեռքով և մեծ հմտութեամբ։ Տեղական անուններից գերադասութիւն տւած է հայերէն անուններին, որ միանգամայն արդարութիւն է։

Ա. Ա.